# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

18 մայիսի 2026թ. թիվ 535

## Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, Ա.ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ ԵՎ Ս.ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանի 2026 թվականի մայիսի 18-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանին, գլխավոր մասնագետներ Արտյոմ Շահվերդյանին և Սամվել Խառատյանին ս/թ մայիսի 21-ին մեկ օրով գործուղել Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայր՝ «Բուսաբուծության աջակցության» ծրագրով նախատեսված 2025թ. աշնանացան ցորենի ցանքատարածություններում մոնիթորինգ իրականացնելու համար:

2. Գործուղումն իրականացնել «ВАЗ 21154, 2012թ.» մակնիշի 610 CP 61 պետհամարանիշի ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ահդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանին, գլխավոր մասնագետներ Արտյոմ Շահվերդյանին և Սամվել Խառատյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

5/18/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. մայիսի 18
ք.Վանաձոր